ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.07.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/15

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Երպետ» ՍՊԸ-ի կողմից 06.07.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/15 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Երպետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Երպետ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 06.07.2017թ. բողոքով հայտնել է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից օդազտման, կլանման սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-14/17» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցել են «Օմեգա» ՍՊԸ-ն և «Երպետ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման 19.06.2017թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ վերը նշված երկու մասնակիցների բոլոր փաստաթղթերը գնահատվել են հրավերի պահանջներին բավարար, իսկ «Օմեգա» ՍՊԸ-ն որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.06.2017թ. թիվ 6 արձանագրությամբ «Օմեգա» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես ընտրված մասնակից և սահմանվել է 10 օրացույցային օր անգործության ժամկետ՝ մինչև 07.07.2017թ.:

Ընկերությունը գտնում է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթները՝ հետևյալ հիմնավորվածությամբ.

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասը, քանի որ բավարար գնահատելով «Օմեգա» ՍՊԸ-ի հայտը կատարել է խախտում, այն է՝ նշված մասնակցի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի մեջ նշված չի եղել ամիսը, ամսաթիվը, այնինչ՝ մասնակիցը պետք է նշեր հայտը ներկայացնելու օրվա ամիսը, ամսաթիվը և տարին:

Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է:

Վերոգրյալով պայմանավորված՝ Ընկերությունը բողոքով Խորհրդին խնդրել է՝

1. Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-14/17» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով «Օմեգա» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու գործընթացը, որը Խորհրդի 11.07.2017թ. միջանկյալ որոշմամբ բավարարվել է:

2. Դադարեցնել «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-14/17» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 19.06.2017թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված՝ «Օմեգա» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին 26.06.2017թ. թիվ 6 որոշումները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 11.07.2017թ. ժամը 12:00-ի և 14.07.2017թ. ժամը 15:00-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն 11.07.2017թ. թիվ 40-1927 գրությամբ հայտնել է, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-14/17» ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Օմեգա» ՍՊԸ-ն և «Երպետ» ՍՊԸ-ն:

«Օմեգա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթում տուժանքի համաձայնագրի վրա բացակայում է ամսաթիվը, ինչը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը համարել է ոչ էական և հաղթող է ճանաչել ավելի ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Օմեգա» ՍՊԸ-ին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 11.07.2017թ. ժամը 12:00-ի և 14.07.2017թ. ժամը 15:00-ի նիստերի վերաբերյալ, 14.07.2017թ. ժամը 15:00-ի նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար օդազտման, կլանման սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-14/17» ծածկագրով բաց ընթացակարգ:

2. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-14/17» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Երպետ» ՍՊԸ-ի և «ՌոսՍերվիս» ՍՊԸ-ի կոնսորցիումը և «Օմեգա» ՍՊԸ-ն:

3. «Օմեգա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրի մեջ չի նշվել այն ներկայացնելու օրը, ամիսը և տարին:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.06.2017թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Օմեգա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատվել է բավարար և նշված ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Երպետ» ՍՊԸ-ի 06.07.2017թ. բողոքը, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի 11.07.2017թ. թիվ 40-1927 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում:

Կարգի 44-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հայտերի բացման նիստում նույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝ բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

Նույն կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-14/17» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Օմեգա» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրի մեջ չի նշել այն ներկայացնելու օրը, ամիսը և տարին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.06.2017թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Օմեգա» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատվել է բավարար և ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, բավարար գնահատելով «Օմեգա» ՍՊԸ-ի հայտը, գործել է իրավաչափ՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: ***Հայտը ներառում է մասնակցի կողմից հասպարված հայտի ապահովումը:***

Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.3 ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ ***մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:***

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 369-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժանք (տուգանք, տույժ) է համարվում օրենքով կամ պայմանագրով որոշված այն դրամական գումարը, որը պարտապանը պարտավոր է վճարել պարտատիրոջը՝ պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում՝ ներառյալ կատարման կետանցի դեպքում: Տուժանք վճարելու պահանջով պարտատերը պարտավոր չէ ապացուցել, որ իրեն վնաս է պատճառվել:

Նույն օրենսգրքի 370-րդ հոդվածի և 371-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժանքի մասին համաձայնությունը պետք է կնքվի գրավոր՝ անկախ հիմնական պարտավորության ձևից:

Գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է տուժանքի մասին համաձայնության անվավերության:

Պարտատերն իրավունք ունի պահանջել վճարելու օրենքով սահմանված տուժանքը (օրինական տուժանքը), անկախ այն բանից, կողմերի համաձայնությամբ նախատեսվա՞ծ է՝ այն վճարելու պարտականություն, թե՞ ոչ:

Ընթացակարգի հրավերի 9-րդ հավելված տուժանքի մասին համաձայնագրի 1-ին կետի 1.2-րդ ենթակետի համաձայն՝ որպես մասնակցության հայտի ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների

կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

Ընդ որում վճարման պահանջագիրը լրացվում է՝ համաձայն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:

Այսպիսով վերը նշված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ի տարբերություն մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրի, որը որպես բանկային գործառնությունների հետ կապված փաստաթուղթ, պարտադիր ենթակա է լրացման սահմանված կարգով, որը հաստատված է ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոններով», ինչպես նաև որը ամրագրված է ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. «Գնումների գործընթացքում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 667-Ա հրամանով հաստատված ընթացակարգի հրավերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգով», տուժանքի մասին համաձայնագրի լրացման համար պարտադիր կարգ նախատեսված չէ թե հրավերով և թե իրավական այլ ակտով: Ընդ որում՝ տուժանքի մասին համաձայնագիրը չի հանդիսանում բանկային գործառնությունների հետ կապված փաստաթուղթ:

Քանի որ սահմանված կարգի համաձայն՝ հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը, հետևաբար տուժանքի մասին համաձայնագիրը ներկայացվում է հայտի հետ միաժամանակ, ընդ որում Կարգի 43-րդ կետը սահմանում է, որ բացառությամբ էլեկտրոնային եղանակով կատարվող գնումների, գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ դրանց ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Ընդ որում տուժանքի մասին համաձայնագրի 2-րդ կետի 2.1 ենթակետի համաձայն՝ համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև գնման ընթացակարգի շրջանակում կնքվելիք պայմանագրի ուժի մեջ մտնելը կամ գնման ընթացակարգում հաղթող չճանաչվելը կամ գնման ընթացակարգը չկայացված հայտարարելը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդը գտնում է, որ «Օմեգա» ՍՊԸ-ի կողմից «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-14/17» ծածկագրով բաց ընթացակարգին ներկայացված հայտի ապահովման տուժանքի մասին համաձայնագրի մեջ օրը, ամիսը և տարին չլրացված լինելու հանգամանքը չի կարող դիտարկվել որպես էական և հիմք հանդիսանալ մասնակցի հայտը սույն հիմքով անբավարար գնահատելու համար, ուստի Խորհուրդը գտնում է, որ «Երպետ» ՍՊԸ-ի կողմից 06.07.2017թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Երպետ» ՍՊԸ-ի կողմից 06.07.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**